Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի
№274Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, հաշվարկային կենտրոնի, էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման և էլեկտրական էներգիայի բաշխման գործունեության լիցենզիա ունեցող անձանց (այսուհետ՝ լիցենզավորված անձինք) կողմից տեղեկատվության հասանելիության ապահովման ընթացակարգը և պայմանները:
2. Լիցենզավորված անձինք պարտավոր են ապահովել իրենց կողմից մատուցվող ծառայությունների (դրանց հասանելիության), դրանց սակագների, ծառայությունների մատուցման տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը՝ համաձայն սույն կարգի:
3. Լիցենզավորված անձինք տեղեկատվության հասանելիությունն ապահովում են՝
   1) իրենց պաշտոնական կայքերում հրապարակման միջոցով,
   2) շահագրգիռ անձանց գրավոր հարցման համաձայն՝ տեղեկատվության տրամադրման միջոցով:
4. Ծառայությունների մատուցման տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անձը, իսկ միջհամակարգային էլեկտրահաղորդման գծերի թողունակության, հաղորդման ծառայությունների մատուցման տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձը՝ սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված գրավոր հարցման հիման վրա:

5. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված և լիցենզավորված անձանց պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության ցանկացած փոփոխություն ենթակա է հրապարակման 5 աշխատանքային օրվա ընթացքում:
6. Լիցենզավորված անձինք իրականացնում են տեղեկատվության հարցումների հաշվառում, ինչպես նաև պահպանում են տեղեկատվության հարցման վերաբերյալ (հարցումներ, տրամադրված տեղեկատվություն, մերժումներ և այլն) փաստաթղթերի պատճենները՝ 3 տարի ժամկետով:
7. Տեղեկատվության տրամադրման մերժումը, կամ ոչ լիարժեք տրամադրումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում կամ դատական կարգով:
8. Լիցենզավորված անձինք օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում հրապարակվող կամ տրամադրվող տեղեկատվության ամբողջականության և հավաստիության համար:
9. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված և լիցենզավորված անձանց պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը ենթակա է տրամադրման ցանկացած անձի՝ համապատասխան գրավոր հարցումն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում, իսկ տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորություններին առնչվող տեղեկատվությունը ենթակա է տրամադրման 30 օրվա ընթացքում: